ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Երևան

02.08.2019թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Ընդունել ի գիտություն, որ նիստին բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը, այդ իսկ պատճառով հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում էր ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2019թ.-ի թիվ 5 արձանագրության 1.2 և 1.3 որոշումները չեղյալ ճանաչելու վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2019թ.-ի թիվ 5 արձանագրության 1.2 և 1.3 որոշումները չեղյալ ճանաչելու վերաբերյալ.
(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ.-ի 4.1 որոշման համաձայն 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից էր ճանաչվել **«Ջետտա» ՍՊԸ-ն /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/:** Մասնակցի կողմից ներկայացվել էր գնային առաջարկ՝ որում գինը /4 279 000 ՀՀ դրամ/ ներկայացված էր առանց ԱԱՀ-ի:
19.07.2019թ.-ին մասնակցին ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու մասին:
Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալից 25.07.2018թ.-ին ստացված թիվ 03/27-1/13539-18 գրության, ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ: Հաշվի առնելով վերոնշյալը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել էր **«Ջետտա» ՍՊԸ-ի /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/** կողմից ներկայացված հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, մերժել և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից էր ճանաչվել **«Խաչպար» ՍՊԸ**-ն:

25.07.2019թ.-ին **«Ջետտա» ՍՊԸ-ն /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/** ծանուցվել է իր կողմից ներկայացված հայտի մերժման վերաբերյալ, իսկ **«Խաչպար» ՍՊԸ**-ն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու վերաբերյալ:

26.07.2019թ.-ին և **30.07.2019թ.**ին **«Ջետտա» ՍՊԸ-ի /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/** կողմից գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. Փոստին ստացված գրությունների համաձայն **«Ջետտա» ՍՊԸ-ն** և **«Արմֆարմ» ՍՊԸ-ն** շրջանառության հարկ վճարող կազմակերպություններ չեն հանդիսանում, իսկ 1-ին չափաբաժնով ձեռք բերվող ապրանքի համար ներկայացվել է գնային առաջարկ առանց ԱԱՀ, քանի որ նշված ապրանքը համաձայն ԱԱԳ մաքսային ծածկագրի /3808949000/ ազատված է ԱԱՀ-ից:

1.2 **02.08.2019թ.** Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Մասնակցի կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաև ստուգելով դրանց իսկությունը և հիմք ընդունելով ՀՀ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12) կետը, **որոշեց.**

1.2.1 Չեղարկել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **25.07.2019թ.**-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված 1.2 և 1.3 որոշումները:

1.2.2 «Ջետտա» ՍՊԸ-ին /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով **«Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/** ճանաչել **1**-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

1.2.3 «Ջետտա» ՍՊԸ-ին /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով **«Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/ և «Խաչպար» ՍՊԸ-ին** ծանուցել սույն որոշման Ն գնահատող հանձնաժողովի **25.07.2019թ.**-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված 1.2 և 1.3 որոշումները չեղարկված ճանաչելու վերաբերյալ:

1.2.4 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ **19.07.2019թ**-ին 1-ին ծանուցված 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցները **(«Մեդիտեք» ՍՊԸ, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ և «Ջետտա» ՍՊԸ** (հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով **«Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ)**) սահմանված ժամկետում ներկայացրել են ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ուստի գնման ընթացակարգը շարունակել սահմանված կարգով՝ մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման փուլից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղեր զբաղեցրած մասնակցի կողմից ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 16:00 ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Վ.Վահանյան

Գնահատող _____ Գ.Անտոնյան

Գնահատող _____ Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան